ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

**Դավիթ Մարգարյան**
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

Կ.Տ. (ստորագրությունը)

**27.12.2023 թ.**

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը***

Անվանումը՝ **Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով**

Հասցեն՝ **ք. Երևան, Իսահակյան 28**

***2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի հիմնավորումը***

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կարիքների համար տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայությունների ձեռքբերում:

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Գնանշման հարցման ընթացակարգի կիրառում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստված կարգի 80-րդ կետ:

***3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները***

«ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41» ծածկագրով **տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների եթերների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայությունների** ձեռքբերման նպատակով գնանշման հարցում (ԳՀ) գնման գործընթացի հայտարարությունը և հրավերը ARMEPS էլեկտրոնային համակարգով՝ ավտոմատ եղանակով, 2023 թվականի նոյեմբերի 20-ին հրապարակվել է www.armeps.am կայքում, որից հետո նշված հայտարարությունն ու հրավերը ավտոմատ եղանակով հրապարակվել է նաև տեղեկագրում:

«ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2023 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 12:30-ին, ԱՐՄԵՊՍ /ARMEPS/ էլեկտրոնային համակարգով:

*Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:*

***4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները***

*Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:*

*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ______________________

***5. Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումները, գտնվելու վայրը, կապի միջոցները***

| N | *Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները* | *Հայտ ներկայացրած մասնակիցների հասցեն, կապի միջոցները* |
|---|---|---|
| **1.** | «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲԸ | ք. Երևան, Այգեստան 9-րդ փող, տուն 115<br>հեռ. 011 32 15 15<br>էլ. հասցեն՝ nina.harutyunyan@admosphere.am |

***6. Հայտերով ներկայացված գները***

| Չափա-բաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Գնային առաջարկը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | գինը՝ ներառ. ԱԱՀ | գինը՝ առ. ԱԱՀ | ԱԱՀ |
| 1 | Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայություններ | «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲԸ | 12000000 | 10000000 | 2000000 |

***7. Տեղեկություններ մասնակիցների հետ բանակցությունների վարման մասին.***

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետով՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակիցների հետ վարվելու են միաժամանակյա բանակցություններ «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41» ծածկագրով հայտարարված ԳՀ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով՝ «Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայություններ»:

Բանակցությունները տեղի ունեցան 20 րոպե տևողությամբ՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 11:30-11:50 Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Իսահակյան 28, 1-ին հարկ՝ դահլիճում:

***8. Բանակցությունների արդյունքում ներկայացված գները.***

Բանակցությունների արդյունքում «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերության կողմից առաջարկված գինը մնաց անփոփոխ:

***9. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.***

Հաշվի առնելով նվազագույն գնային առաջարկի սկզբունքը և այն հանգամանքը, որ «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41» ծածկագրով հայտարարված ԳՀ գնման ընթացակարգի միակ մասնակից է հանդիսացել «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերությունը, որի գնային առաջարկը չի գերազանցել գնման հայտով ներկայացված գնման գինը հանձնաժողովը որոշեց՝ N1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերությանը:

***10. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.***

- Հայտերը գնահատվում են նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- Գնահատման արդյունքները՝

Հանձնաժողովը որոշեց՝

«Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայություններ» չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Ադմոսֆեր Արմենիա» ՓԲ ընկերությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պայմանագիր կնքելու նպատակով «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, ընտրված մասնակցին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել ծանուցվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով, ինչպես նաև գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով որակավորման ապահովում:

***11. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը***

*Հայտի մերժման դեպք չի արձանագրվել*

***12. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքելու դեպքում՝ դրա հիմնավորումը***

*Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած ընտրված մասնակցի*
*Անվանումը՝* **«Ադմոսֆեր Արմենիա» ՓԲԸ**
*Հասցեն՝* **ք. Երևան, Այգեստան 9-րդ փող, 115 տուն**
*Ծածկագիրը՝* **ՀՌՀ-ԳՀԾՁԲ-23/41**
*Կնքման ամսաթիվը՝* **22 դեկտեմբերի 2023 թ.**
*Գործողության ժամկետը՝* **31.12.2024 թ.**
*Գինը՝* **12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ**

*Կնքված գնման պայմանագիրը կցվում է*

***13. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը***

*Հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել*

***14. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները***

*Բողոքներ չեն ներկայացվել*

***15. Այլ անհրաժեշտ տեղեկություններ***

______________

Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու՝ Ա. Մատինյան

*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* __________